

խուսուած ուսուցիչներու անհազարեան շարքը: Այս անգամ Մուստաֆայի կառավարութիւնը, հակակղերական լինելով հանդերձ, միանգամայն չի հրաժարուիր համխալածութեան երազներէն: Իսլամական կղերականութիւնը, հալածուած Թիւրքիոյ ներսում, կը դառնայ սոսկ արտահանութեան ապրանք մը: Ինչո՞ւ դրսում չաջակցել համխալածական հոսանքին, որ այնքան քաջակերուած է Ռուսիոյ ու մասամբ Գերմանիոյ կողմէն եւ որը կարող է դառնալ յոյսի նոր աղբիւր մը անդամալուծուող Թիւրքիոյ համար... Էնվէրն ու Ջեմալը այլեւս չկան իրենց հոյակապ ծրագիրներով, բայց կարելի է գործը վարել եւ փոքրիկ էնվէրներու ձեռքով...:

Բազմիցս արձանագրուած է եւրոպական մամուլէ մէջ — մասնաւորապէս Փրանս. գաղութային քաղաքականութեան մեծ օրգանի, l'Asie Francaise-ի մէջ, որ աֆրիկեան Սեն-նուսի կոչուած ցեղի հետ, անոր առաջնորդ Ահմէդ Եէրիֆի հետ, ամենասերտ յարաբերութիւններ կը պահպանէ Մուստաֆա Բեմալը, որ Անգորայէն կը ղեկավարէ համխալածական շարժումը: Ահմէդ Եէրիֆը Պալիֆայութեան թեկնածուներէն է եւ այդ ձգտումի մէջ անոր նեցուկ է... նոյնիւքը հակակղերական ու հակախալիֆայական Մուստաֆա Բեմալը, նեցուկ է եւ Մոսկուան, որ Վիլհէլմ Զօհէնցօլլերնէն յետոյ այսօր ամենախաղաղաւու եւ ամենաեռանդուն մղիչն է պանխալիֆով:

Վերջին ժամանակներս ան առանձին յանդերձութեամբ դուրս բարձրացուց մասնաւորապէս հիւսիսային Աֆրիկայում եւ առաջաւոր Ասիայում: Ապացոյց՝ Երէկուան լայնածաւալ ապստամբութիւնները Պրանսայի դէմ — Մարսիլիո, Սիւրիա — որ կանոնաւոր պատերազմի բնոյթ էին առեր: Պրանսացիք եւ սպանիացիք առայժմ յաղթական են: Բայց անհնարին չէ, որ վերջ ի վերջոյ ամբողջ Մարսիլիոն թօթափէ օտար խնամակալութիւնը իր ծաւալուն հոգեբու վրայ, որոնք բաժնուած են երեք զօներու. մէկը դրուած է Փրանսական հովանաւորութեան տակ, միւսը սպանիական, երրորդը՝ միջազգային դրօշի տակ: Վերջինը Թամիթիի շրջանն է, Միջերկրականի տիրապետութեան մեծագոյն բանալիներէն մէկը, որ նոյնպէս կը դրդուէ խօլական ախորժակներ եւ յղի է թեբեւս զարոյց արիւնտո բախումներով...:

Թիւրքիոյ գործակալները, Գերմանիայի գործակալները, Մոսկուայի բոլշևիկ առաքեալները, Փրանսական կոմունիստ կուսակցութիւնը Դօրիոյի եռանդուն ղեկավարութեամբ, ստեղծեցին իսլամ Աֆրիկայի մէջ դաւադրական խիտ ցանց մը եւ բոլորի գործունէութեանը կը նախադասէր Մոսկուայի հուշակաւոր «Կոմիւնտերն»ը, որ տարեկան մօտ 200 միլիոն ուրբլի կը ծախսէ Ռուսաստանի կիսաքաղց ժողովուրդների միջոցներէն, կը ծախսէ պրոպագանդի ու ազիտացիայի վրայ, որպէսզի յաջողի հրդեհել աշխարհը Բալտեան երկիրներէն մինչեւ Ալթեր եւ Չինաստան...:

Պարսկաստանն եւս կարող է դառնալ նշանակալից անցքերու թատր: Ռիզա Սանի նկարագիրն ու ձգտումները դեռ զրոյցներու եւ մտահոգութիւններու առարկայ են Լոնտոնի, Մոսկուայի, Անգորայի, Բերլինի քաղաքական շրջաններում: Իրողութիւնն է, որ քանի մը տարիէ ի վեր Մոսկուա եւ Անգորա տեղային ճիւղեր կ'ընեն Թեհրանի մէջ՝ դուրս մղելու միանգամ ընդմիշտ բրիտանական ազդեցութիւնը: Եթէ մահմեդական Պարսկաստանն եւս իր հազին մարդապաշարով, հողային ու այլ հարստութիւններով վերջ ի վերջոյ մտնի գերմանո-սովետ-թիւրք գործունէութեան շրջանը, կարելի է երեւակայել, թէ ինչքան զօրաւոր անդրադարձումներ պիտի ունենայ այդ՝ արեւմտեան պետութիւններու, մասնաւորապէս Անգլիոյ ասիական քաղաքականութեան վրայ: Չմոռնանք, որ Պարսկաստանը Հնդկաստանի նախադուռն է:

* * *

Այդպէս, Խորհրդային Ռուսաստանը ամէն տեղ, ամէնքի դէմ կը դաւէ, բոլոր յարաբերութիւնները կը խտնակէ եւ սակայն շարունակ հաւա՞ր կը ձգէ, թէ ողջ աշխարհը իրեն դէմ կը դաւէ ու կը սպառագինուի: Քիչ առաջ Բուխարին — Երրորդ Ինտերնացիոնալի նոր նախագահը — վերստին զարկեց ահազոյնակը, մամուլին յանձնելով իր զգայացուց զուշակութիւնները, որոնց իմաստն այս է.

— «Իմպերիալիստները մեզի դէմ կը դաւեն: Պատերազմը անխուսափելի է: Ե՞րբ կը պայթի — չենք կարող ըսել: Ամէն պարագայի, սլէտք է պատրաստուինք»...

Եւ ասոր հետ — տղայական յոխորտանք-